

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «կարող է կասեցվել» բառերը փոխարինել «կասեցվում է» բառով:

2) 1-ին մասի 11-րդ կետում «տարեկան» բառից առաջ լրացնել «ամսական, եռամսյակային կամ» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 37-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «կարող է դադարեցվել» բառերը փոխարինել «դադարեցվում է» բառով:

2. 1-ին մասը լրացնել նոր 10-րդ մասով

<<10) մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման համար լիցենզիայի տարեկան պետական տուրքը չվճարելու դեպքում.>>

4. 13-րդ մասից հետո լրացնել նոր 14-րդ մասով հետևյալ խմբագրությամբ.

<<14. Սույն հոդվածի առաջին մասի 10-րդ կետով նախատեսված հիմքով լիցենզիայի գործողությունը համարվում է դադարեցված՝ լիցենզիաների վրա նշված լիցենզիաների տրման ամսաթվի օրվանը հաջորդող օրվանից:>>:

**Հոդված3.** 43-րդ հոդվածի 2-րդ մասի «16. Տրանսպորտի բնագավառ» բաժինը լրացնել նոր 6-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

<<6.	Միջպետական կամ Հայաստանի Հանրապետության տարածքում կանոնավորևչկանոնավորուղևորափոխադրումներիկազմակերպում	ԿՄ	-	-	-	Ո	-
------	--	----	---	---	---	---	---

**Հոդված 4. Անցումային դրույթ**

1. Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի 16-րդ բաժնի («Տրանսպորտի բնագավառ») 4-րդ կետին համապատասխան ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման համար տրված լիցենզիաները և լիցենզիաների ներդիրները ենթակա չեն վերաձևակերպման:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված է մտնում օրենքը ուժի մեջ մտնելուց 6 ամիս հետո:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**  
**<<ԱՎՏՈՄՈՐԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ.

**<<Տարածմտորային փոխադրում՝** լիցենզիայի հիման վրա կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից թեթև մարդատար ավտոմոբիլներով ուղևորների և ուղեբեռների պատվերով (էլեկտրոնային հարթակներով, հեռախոսով, ռադիոկապով և այլ միջոցներով) իրականացվող փոխադրում:>>:

**Հոդված 2.** Օրենք 7-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի <<պայմանագրերի>> բառից հետո լրացնել <<, <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի>> բառերը,

2. 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-րդ մաս.

<<1.1. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի լիցենզիաների (ներառյալ տրանսպորտային միջոցների ներդիրների) և միջպետական ավտոբուսային կանոնավոր ու ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման համար տրամադրված թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմինը էլեկտրոնային համակարգով առցանց տրամադրում է մաքսային ծառայության պետական լիազոր մարմնին: Համապատասխան թույլտվությամբ սահմանային անցակետերը հատած միջպետական ավտոբուսային ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների դեպքում՝ նաև ուղևորների անվանացուցակը մաքսային ծառայության պետական լիազոր մարմինը էլեկտրոնային համակարգով առցանց տրամադրում է լիազոր մարմնին:>>:

**Հոդված 3.** Օրենքի 8-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը <<կարգով>> բառից հետո լրացնել <<, բացառությամբ մրցութային եղանակով կազմակերպվող ավտոբուսային կանոնավոր փոխադրումների>> բառերը:

2. 2-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով

<<3. Միջպետական կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ապահովագրել ուղևորների կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասի հատուցման իրենց քաղաքացիական պատասխանատվության ռիսկը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:>>:

**Հոդված 4.** Օրենքի 11-րդ հոդված շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

<<Հոդված 11. Կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման հիմնական պահանջները

1. Միջմարզային, ներմարզային և ներքաղաքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների կազմակերպման պայմանները և կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Միջմարզային, ներմարզային և ներքաղաքային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների պետք է ներառվեն հաշմանդամություն ունեցող անձանց նստեցման և իջեցման համար հարմարեցված ավտոբուսներ, որոնց նվազագույն քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Ավտոբուսային կանոնավոր փոխադրումների իրականացման գործընթացը կարգավորվում է դրանց երթուղային ցանցը կազմակերպող համապատասխան մարմնի և փոխադրումներն իրականացնող կազմակերպության միջև կնքված համապատասխան պայմանագրով, որի պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում ուղևորների և ուղեբեռի կանոնավոր փոխադրումների կազմակերպման գործընթացը կարգավորվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների կազմակերպման կարգով: Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորափոխադրումների կազմակերպման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: >>:

#### **Հոդված 5.** Օրենքի 16-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի <<իրականացվում են>> բառերից հետո լրացնել <<լիազոր մարմնի կողմից տրված լիցենզիայի և թույլտվությունների հիման վրա,>>, իսկ <<ուղղությամբ>> բառից հետո լրացնել <<կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից>> բառերը:

2. 3.1-րդ մասի <<Միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների յուրաքանչյուր երթի համար գանձվում է պետական տուրք՝ <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով և կարգով: Միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրման երթի իրականացման ամբողջ ընթացքում պետական տուրքի վճարման անդորրագիրը պետք է լինի վարորդի մոտ:>> նախադասությունները շարադրել նոր խմբագրությամբ. <<Հայաստանի Հանրապետության հետ տրանսպորտի բնագավառը կանոնակարգող միջազգային համաձայնագրեր չունեցող պետությունից դեպի Հայաստանի Հանրապետություն և հակառակ ուղղությամբ այլ պետություններում հաշվառված տրանսպորտային միջոցներով միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների յուրաքանչյուր երթի համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով և կարգով: Երթի իրականացման ամբողջ ընթացքում պետական տուրքի վճարման անդորրագիրը պետք է լինի վարորդի մոտ:>>:

3.. 4-րդ մասից հետո լրացնել նոր 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ.

<<5. Միջպետական ավտոբուսային ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերին թույլտվության տրամադրումը մերժվում է եթե.

1) փոխադրողի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի են, և մատնանշված թերությունները երեք աշխատանքային օրվա ընթացքում չեն վերացվել.

2) չունի ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիա,

3) միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության և փոխադրման մյուս կողմ հանդիսացող պետության միջև կնքված երկկողմ համաձայնագրի պահանջներին:

6. Միջպետական ավտոբուսային ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերին թույլտվության հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ հստակ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը:

7. Միջպետական ավտոբուսային ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին կամ անհատ ձեռնարկատերին թույլտվության հայտի մերժման դեպքում հայտատուն իրավունք ունի թույլտվություն ստանալու նպատակով ընդհանուր հիմունքներով ներկայացնելու նոր հայտ:

8. Միջպետական ավտոբուսային կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների թույլտվությունների տրամադրման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9. Արգելվում է սահմանային անցակետի հատումը առանց միջպետական ավտոբուսային ուղևորափոխադրումների թույլտվությունների: >>:

#### **Հոդված 6. Օրենքի 17-րդ հոդվածի՝**

1. 1-ին մասի 2-րդ և 3-րդ պարբերությունները շարադրել նոր խմբագրությամբ՝

<<Տաքսամոտորային փոխադրումներն իրականացվում են տվյալ փոխադրումների և տեխնիկական վիճակի պահանջներին համապատասխան ավտոտրանսպորտային միջոցներով՝ լիցենզիայի առկայության դեպքում:

Տաքսամոտորային, ներառյալ էլեկտրոնային հարթակով փոխադրումների կազմակերպման կարգը և պայմանները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: >>:

2. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

<<2. Տաքսամոտորային փոխադրումներն իրականացնողների ավտոտրանսպորտային միջոցները պետք է կահավորված լինեն՝

1) տվյալ ավտոտրանսպորտային միջոցի համար ստուգաչափված սակաչափիչով (տաքսոմետրով) կամ համապատասխան ծրագրային հավելվածներով ներբեռնված սմարթֆոններով, պլանշետներով, կամ այլ էլեկտրոնային սարքերով,

2) տաքսի ծառայություն մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ և տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի մասին տեղեկատվությամբ.

3) գնացուցակով, որն առնվազն պետք է ներառի ուղևորափոխադրման նվազագույն արժեքը (առկայության դեպքում), ուղևորափոխադրման սակագինը, նստելավարձի և (կամ) սպասելավարձի մասին (առկայության դեպքում) տեղեկատվությունը:>>:

4. 2-րդ մասից հետո լրացնել նոր 2.1-ին մաս՝

<<2.1. Տաքսամոտորային փոխադրումներն իրականացնողների ավտոտրանսպորտային միջոցները կարող են նաև կահավորված լինել տանիքին՝ «ՏԱՔՍԻ» գրառմամբ կամ շախմատածև դեղին և սև տարբերանշանով, որի դեպքում թափքի կողային մասում պետք է առկա լինի շախմատածև դեղին և սև տարբերանշան, ուղևորափոխադրման նվազագույն արժեքը (առկայության դեպքում), ուղևորափոխադրման սակագինը, նստելավարձի և (կամ) սպասելավարձի մասին (առկայության դեպքում) տեղեկատվությունը:>>:

5. 4-րդ մասից հետո լրացնել նոր 5-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.

<<5.30 և ավելի ավտոտրանսպորտային միջոցներով տաքսամոտորային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը պետք է փոխադրումներում ներգրավեն հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրման համար նախատեսված նվազագույնը մեկ ավտոտրանսպորտային միջոց:>>:

#### **Հոդված 7.** Օրենքի 18-րդ հոդվածի

1. 5-րդ մասի 3-րդ պարբերությունում <<տաքսամետրի>> բառը փոխարինել <<սակաչափիչի>> բառով:

2. 8-րդ մասին հետո լրացնել նոր 9-րդ և 10-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ.

<<9. Պատվերներ (էլեկտրոնային հարթակներով, հեռախոսով, ռադիոկապով և այլ միջոցներով) ձևակերպող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են՝

1) պատվերներ փոխանցել միայն լիցենզա ունեցող կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին և ֆիզիկական անձանց

2) համապատասխան ծրագրերով աշխատելու դեպքում լիազոր մարմնին տրամադրել տվյալների բազայից օգտվելու հնարավորություն:>>:

**Հոդված 8.** 24-րդ հոդվածի 2-րդ մասում <<, զբաղեցված մարդատար-տաքսի ավտոմոբիլներով չմիացված լուսացուցիչով>> բառերը հանել:

#### **Հոդված 9.** Անցումային դրույթներ

1. Սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո ֆիզիկական անձանց տրամադրված մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման համար լիցենզիա ունեցող ֆիզիկական անձինք տաքսամոտորային փոխադրումներ իրականացնում են մինչև լիցենզիայի և ներդիրի վերաձևակերպումը կամ գործողության դադարեցումը:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հուլիսի 1-ից, իսկ 6-րդ հոդվածի 5-րդ մասը ուժի մեջ է մտնում սույն օրենքն ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո:

**Հոդված 10.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ պարբերությունը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 2.** Օրենքի 6.<sup>1</sup>-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետից հանել «ինչպես նաև դրանց վճարումն ուշացնելու համար սույն օրենքով սահմանված տույժերի գումարների վճարմամբ,» բառերը.

2) 3-րդ կետի երկրորդ պարբերությունը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 3.** 19-րդ հոդվածի «15. Տրանսպորտի բնագավառ» բաժնի.

1. 15.4.1-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<15.4.1.Միջպետական և Հայաստանի Հանրապետության տարածքում կանոնավորև կանոնավորուղևորափոխադրումների իրականացման համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով
--	----------------------------------

յուրաքանչյուր ներդիրի համար՝ տարեկան	բազային տուրքի 10-ապատիկի չափով>>
--------------------------------------	-----------------------------------

2. 15.5 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<15.5 Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից՝

- մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով
--	----------------------------------

- յուրաքանչյուր ներդիրի համար (բացառությամբ	բազային տուրքի 10-
---	--------------------

հաշմանդամությունունեցողանձանցփոխադրման  
համարնախատեսված և բացառապեսէլեկտրական  
շարժիչովկահավորվածավտոտրանսպորտային  
միջոցներիներդիրների՝ տարեկան

ապատիկի չափով

Ընդորումհաշմանդամությունունեցողանձանցփոխադրմանհամարնախատեսվ  
ածտրանսպորտայինմիջոցինտրամադրվողներդիրիհետմեկտեղմարդատար-  
տաքսիավտոմոբիլներովուղևորափոխադրումներիրականացնողկազմակերպության  
ևսմեկտրանսպորտայինմիջոցներդիրիտրամադրմանհամարչիգանձվումպետական  
տուրք:>>:

**Հոդված 4.** Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 20-րդ հոդվածի 53-րդ կետը, 21-րդ  
հոդվածի ե) կետը, 32-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ պարբերությունները և 35-րդ  
հոդվածը:

**Հոդված 5.** 34-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր  
պարբերությամբ.

<<Սույն օրենքի 19-րդ հոդվածի 15.4.1-րդ և 15.5-րդ ենթակետերով  
սահմանված յուրաքանչյուր ներդիրի համար տարեկան հերթական պետական  
տուրքի վճարումը յուրաքանչյուր տարվա համար կատարվում է  
համապատասխանաբար մինչև առաջիկա տարին սկսելը՝ լիազոր մարմնի կողմից  
համապատասխան ներդիրի վրա նշված ներդիրի տրման ամսաթվից ոչ ուշ:>>:

**Հոդված 6.** Օրենքի 36.1-ին հոդվածի՝

- 1) 1-ին մասից հանել «(տուրք, տույժ)» բառերը.
- 2) 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

**Հոդված 7.** Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը ուժի մեջ է մտնում 2022 թվականի  
հունվարի 1-ից:

2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը <<Պետական տուրքի մասին>>  
Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պետական տուրքի և  
պետական տուրքի տույժերի գծով պարտավորություններ ունեցող անձինք  
պարտավոր են՝ սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո պետական տուրքի գծով  
պարտավորությունները մարել 2 ամսվա, իսկ տուժերը՝ 2 տարվա ընթացքում:  
Նշված ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում լիազոր մարմնի  
որոշմամբ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է:

**Հոդված 8.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման  
օրվան հաջորդող տասներորդ օրը:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 137.<sup>2</sup>-րդ հոդվածի.

1.1-ին մասից հետո լրացնել նոր 1.1-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.

<<1.1. Միջպետական կամ Հայաստանի Հանրապետության տարածքում առանց կանոնավոր, բացառությամբ մրցութային եղանակով կազմակերպվող փոխադրումների, և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի ուղևորափոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկի չափով:>>:

2. 9-րդ մասի 2-ից 4-րդ պարբերությունները շարադրել նոր խմբագրությամբ.

<<Առանց սակաչափիչի (տաքսոմետրի), կամ անսարք սակաչափիչով, կամ առանց համապատասխան ծրագրային հավելվածներով ներբեռնված սմարթֆոնների, պլանշետների, կամ այլ էլեկտրոնային սարքերի կիրառման մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի չափով:

Առանց տաքսի-ծառայություն մատուցող կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ և տվյալ տրանսպորտային միջոցի վարորդի մասին տեղեկատվության կամ գնացուցակի մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

«ՏԱՔՍԻ» գրառմամբ կամ շախմատածև դեղին և սև տարբերանշանով կահավորված ավտոտրանսպորտային միջոցները առանց թափքի կողային մասում առկա ուղևորափոխադրման նվազագույն արժեքի (առկայության դեպքում), ուղևորափոխադրման սակագնի, նստելավարձի և (կամ) սպասելավարձի մասին (առկայության դեպքում) տեղեկատվության մարդատար-տաքսի ավտոմոբիլով փոխադրումներ իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

Պատվերներ (էլեկտրոնային հարթակներով, հեռախոսով, ռադիոկապով և այլ միջոցներով) ձևակերպող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից պատվերները լիցենզա չունեցող կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին և ֆիզիկական անձանց փոխանցելը, ինչպես նաև

համապատասխան ծրագրերով աշխատելու դեպքում լիազոր մարմնին տվյալների բազայից օգտվելու հնարավորություն չտրամադրելը կամ բազայի թերիտրամադրելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

30 և ավելի ավտոտրանսպորտային միջոցներով տաքսամոտորային փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից փոխադրումներում հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրման համար նախատեսված նվազագույնը մեկ ավտոտրանսպորտային միջոց չներգրավելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով: >>:

**Հոդված 2.** Օրենսգրքի 137.7 հոդվածի՝

1. 1-ին մասում <<Առանց>> բառից հետո լրացնել <<թույլտվության կամ>> բառերը:

2. 3-րդ մասի <<Հայաստանի Հանրապետությունից դեպի Վրաստան և (կամ) հակառակ ուղղությամբ ավտոբուսային փոխադրումների դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով.

Հայաստանի Հանրապետությունից դեպի այլ պետություններ և (կամ) հակառակ ուղղությամբ ավտոբուսային փոխադրումների դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրհիսնապատիկի չափով.

Հայաստանի Հանրապետությունից դեպի Վրաստան և (կամ) հակառակ ուղղությամբ միկրոավտոբուսային փոխադրումների դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով.

Հայաստանի Հանրապետությունից դեպի այլ պետություններ և (կամ) հակառակ ուղղությամբ միկրոավտոբուսային փոխադրումների դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկի չափով>> բառերը հանել:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման**

### **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).**

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է միջպետական ոչ կանոնավոր ավտոբուսային ուղևորափոխադրումների կանոնակարգմամբ:

### **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս միջպետական ոչ կանոնավոր ավտոբուսային ուղևորափոխադրումների ոլորտում առկա են բազմաթիվ կազմակերպություններ, որոնք ոչ կանոնավոր ուղևորափոխադրումների անվան տակ իրականացնում են կանոնավոր ուղևորափոխադրումներ: Վերհսկողություն իրականացնող մարմինը՝ ՀՀ տրանսպորտային տեսչությունը, սահմանային անցակետերում չունենալով վերահսկողություն իրականացնելու իրավասություն, հնարավորություն չունի դաշտը լիարժեք վերահսկելու: Արդյունքում փոխադրողների կողմից չի ապահովվում ուղևորափոխադրումների սպասարկման որակն ու անվտանգությունը:

### **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Ոլորտի անվտանգությունն ու սպասարկման որակը բարձրացնելու նպատակով նախատեսվում է լիցենզավորել կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումները, իսկ սահմանային անցակետերում միջպետական ուղևորափոխադրումների վերահսկողությունը վերապահել մաքսային ծառայության պետական լիազոր մարմինին:

Ներկայումս գործող օրենսդրությամբ լիարժեք չեն կանոնակարգվում միջպետական ուղևորափոխադրումները: Որոշ դեպքերում դրանք իրականացվում են միջպետական փոխադրումների համար չնախատեսված, երբեմն սահմանված կարգով տեխնիկական զննություն չանցած կամ ոչ սարքին ավտոբուսներով, ինչը չի ապահովում ուղևորների անվտանգ փոխադրումն ու պատշաճ սպասարկումը: Վերջին տարիների վիճակագրությունը ցույց է տալիս, որ բարձրացել է միջպետական ուղևորափոխադրումների վթարների հաճախականությունը: Ապահովագրական համակարգի բացակայության պատճառով փոխադրող կազմակերպությունները վթարներից տուժած ուղևորներին փոխհատուցում չեն տալիս: Որոշ դեպքերում փոխհատուցում տրվում է ՀՀ կառավարության կողմից ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին:

Փոխադրող կազմակերպությունները միջպետական ուղևորափոխադրումները չեն իրականացնում համապատասխան որակավորում ունեցող վարորդներով, ինչպես նաև չեն

ապահովում «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջների կատարումը:

ՀՀ սահմանային անցակետերում ՀՀ տրանսպորտային տեսչությունը վերահսկողություն իրականացնելու իրավասություն չունի, որի հետևանքով միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացվում են կանոնավոր ուղևորափոխադրումների ռեժիմով, լիարժեքորեն չի ապահովվում միջպետական ուղևորափոխադրումների վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը: Ուղևորների անվանացուցակի վերաբերյալ տեղեկատվությունը էլեկտրոնային համակարգով պետական կառավարման մարմինների միջև իրար փոխանցելու արդյունքում հնարավոր կլինի իրականացնել ոլորտի լիարժեք վերահսկողություն:

## **2. Կարգավորման առարկան**

1. Լիցենզավորել ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական և Հայաստանի Հանրապետության տարածքում կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին:

2. Լիցենզավորումը իրականացնել էլեկտրոնային եղանակով:

3. Լիցենզիայի պետական տուրքի չափը սահմանել 100 000 դրամ տարեկան, իսկ յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի համար՝ 10 000 դրամ տարեկան:

4. Ներդնել պարտադիր ապահովագրության համակարգ: Սահմանել լիցենզավորված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ուղևորների կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասի հատուցման իրենց քաղաքացիական պատասխանատվության ռիսկի ապահովագրման պահանջ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

5. Ուղևորափոխադրումներ իրականացնողների հարկային պարտավորությունների կատարման և միջպետական ուղևորափոխադրումների իրականացման մասով վերահսկողության վերապահում ՀՀ պետական եկամուտների կոմիտեին:

## **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Օրենսդրական փաթեթով ակնկալվում է լիցենզավորել կանոնավոր և ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպություններին, որի արդյունքում դրանք կունենան հավաքակայան, կիրականացվի նախաուղերթային բուժ և տեխզնություն, տրանսպորտային միջոցները կլինեն անվտանգ, անձնակազմի որակավորում կիրականացվի, բարձրացնելով փոխադրման անվտանգությունը: Լիցենզավորման դեպքում հնարավոր կլինի վերահսկելի դարձնել հանրապետությունում շահագործվող ընդհանուր օգտագործման ամբողջ տրանսպորտը: Լիցենզավորված կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով կփոխանցվի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին՝ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

Միջպետական ոչ կանոնավոր փոխադրումներ իրականացնելու համար կտրվեն թույլտվություններ, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը նույնպես էլեկտրոնային եղանակով կփոխանցվի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին՝ վերահսկողություն իրականացնելու նպատակով: Թույլտվությունների բացակայության դեպքում կարգելվի ՀՀ պետական սահմանի հատումը տրանսպորտային միջոցների կողմից:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ**

- 1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.** ՀՀ օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ նախատեսվում է փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և ՀՀ կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1587-Ն որոշման մեջ:
- 2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.** ՀՀ օրենքների նախագծերի գործողությունը միջազգային պայմանագրերին չի հակասում:
- 3. Այլ տեղեկություններ.** Այլ տեղեկություններ չկան:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի նախագծմանը և քննարկմանը հասարակության մասնակցության մասին**

- 1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը.** Օրենքների նախագծերը տեղադրվել են համացանցում՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության [www.mtcit.am](http://www.mtcit.am) կայքում և <https://brisk-cms.e-draft.am> կայքում:
- 2. Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին.** Նախագծերի մշակման փուլում կազմակերպվել են քննարկումներ հասարակական կազմակերպությունների և տաքսի ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնողների ներկայացուցիչների հետ:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին**

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը					
Ցուցանիշներ	ընթացիկ (n-րդ) տարի		Հաջորդող 3 տարիները		
	Ըստ n-րդ տարվա պետական բյուջեի	Փոխությունը n-րդ տարվա պետական բյուջեի համեմատ	n +1	n +2	n +3
			Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)
1	2	3	4	5	6
1. Եկամուտներ					
1.1. պետական բյուջեի եկամուտներ					
1.2. ՏԻՄ եկամուտներ					
2. Ծախսեր					
2.1. պետական բյուջեի ծախսեր					
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր					
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական					
3.1. պետական բյուջե					
3.3. ՏԻՄ բյուջե					
4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):	Օրենսդրական փաթեթի ընդունման դեպքում նախատեսվում է պետական բյուջեի մուտքերի ավելացում:				
4.1. Եկամուտների գնահատում					
4.2. Ծախսերի գնահատում					
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)					

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման**

### **1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը).**

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ծրագրի «Տրանսպորտ, կապ և ՏՀՏ-ի ոլորտ» բաժնի 4-րդ կետի «գ» ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 1105-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 27-րդ կետի կատարման ապահովմամբ:

#### **1.1. Կարգավորման ենթակա հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները**

Ներկայումս հանրապետությունում տաքսի ծառայություններ են մատուցում 190 կազմակերպություններ, որոնցից 52-ը 1-4 ավտոմոբիլով և վճարում են լիցենզիայի համար տարեկան 100000 դրամ պետական տուրք, իսկ 138-ը՝ 5 և ավելի ավտոմոբիլներով, որոնք վճարում են լիցենզիայի համար տարեկան 200000 դրամ պետական տուրք: Այսինքն անհավասար պայմաններ են ստեղծվում տարբեր մեքենաքանակով նույն գործունեությունն իրականացնողների համար լիցենզավորման պետական տուրքի մասով:

Ներկայումս օրենսդրորեն կարգավորված չէ նաև էլեկտրոնային հարթակների միջոցով տաքսի ծառայությունների մատուցման ոլորտը, որը գործող օրենսդրությամբ լիցենզավորման ենթակա չէ և ստեղծում է անհավասար մրցակցային պայմաններ ոլորտում գործունեություն իրականացնողների համար, ինչպես նաև նպաստում է ոլորտում անօրինական փոխադրումների կազմակերպմանը:

#### **1.2. Առկա խնդիրների առաջարկվող լուծումները**

Օրենսդրական փաթեթով նախատեսվում է հանել ֆիզիկական անձանց կողմից տաքսի ծառայությունների մատուցման պահանջը, քանի որ ֆիզիկական անձանց հնարավորություն է տրվել իրականացնել տաքսի ծառայություններ, որի արդյունքում նրանք հայտնվել են նույն ծառայությունը մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի նկատմամբ հարկային արտոնյալ պայմաններում: Միաժամանակ ներկայումս տաքսի ծառայություն մատուցող ֆիզիկական անձինք գործունեություն կիրականացնեն մինչև իրենց լիցենզիայի գործողության դադարեցումը կամ փոփոխությունը: Նախատեսվում է, որ այսուհետ տաքսի ծառայություններ կարող են մատուցել միայն կազմակերպությունները կամ անհատ

ձեռնարկատերերը, որոնց համար արդեն իսկ սահմանված են հարկային հավասար պարտավորություններ:

Միաժամանակ առաջարկվում է կանոնակարգել էլեկտրոնային հարթակների միջոցով ուղևորների պատվերներ գրանցող և փոխանցող կազմակերպությունների գործունեությունը, որը նույնպես անհավասար պայմաններ է ստեղծում տաքսի ծառայություններ մատուցողների համար, ինչպես նաև դուրս է մնում վերահսկողությունից, քանի որ ցանկակաձ անձ կարող է միանալ ծրագրին և իրականացնել տաքսամոտորային փոխադրումներ առանց հարկային պարտավորությունները կատարելու և չապահովելով անվտանգության պահանջները: Առաջարկվում է, որ այդ կազմակերպությունները պայմանագրային հարաբերությունների մեջ մտնեն բացառապես լիցենզավորված տաքսի ծառայություն մատուցողների հետ, միաժամանակ վերահսկողություն իրականացնելու նպատակով լիազոր մարմին տրամադրեն տվյալների բազան:

Հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանության բնագավառում ՀՀ օրենսդրության պահանջների կատարման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնման նպատակով նախատեսվում է 30 և ավելի տրանսպորտային միջոցներ ունեցող կազմակերպությունների համար սահմանել 1 հատ հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցված մարդատար տաքսի ավտոմեքենաների պարտադիր պահանջը: Հաշվարկը իրականացվել է հաշվի առնելով, որ ներկայումս ոլորտում գործունեություն իրականացնող 22 կազմակերպություններ ունեն 30 և ավելի տրանսպորտային միջոցներ, որը բավարար կլինի հաշմանդամություն ունեցող անձանց պահանջարկը բավարարելու համար: Ավելի փոքրաթիվ տրանսպորտային պարկ ունեցող կազմակերպությունների համար նման պահանջ սահմանելը նպատակահարմար չէ և կհանգեցնի ֆինանսական լրացուցիչ մեծ ծախսերի: Միաժամանակ որպես խրախուսանք հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցված մարդատար տաքսի ավտոմեքենաներ ունեցող կազմակերպություններին հնարավորություն է տրվում ևս մեկ ավտոմեքենայի համար ազատել պետական տուրքից:

## **2.Կարգավորման առարկան**

1.Օրենքի ընդունումից հետո մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրում իրականացնող ֆիզիկական անձինք այլևս չեն լիցենզավորվի, հավասար մրցակցային պայմաններ սահմանելու, ինչպես նաև անվտանգության և սպասարկման որակի նկատառումներից ելնելով:

2.Այն ֆիզիկական անձինք, որոնք արդեն իսկ ունեն մեկ մարդատար տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրում իրականացնելու լիցենզիա, շարունակելու են մատուցել ծառայություններ մինչև լիցենզիայի գործողության դադարեցումը (լիցենզիային զրկում, փոփոխություն կամ հանձնում):

3.Ուղևորների փոխադրման պատվերներ ձևակերպող ներառյալ էլեկտրոնային հարթակներով և այլ տեխնիկական միջոցներով կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը ենթակա են պարտադիր լիցենզավորման, քանի որ նրանք փաստացի իրականացնում են տաքսամոտորային ծառայություններ: Նրանց համար պարտադիր պայման է սահմանվել պայմանագրային հարաբերությունների մեջ մտնեն միայն լիցենզավորված տաքսամոտորային փոխադրումներ իրականացնողների հետ և լիազոր մարմին տրամադրեն տվյալների բազան:



4.Տաքսամտորին է հավասարեցված ծրագրային հավելվածներով ներբեռնված սմարթֆոնները, պլանշետները կամ այլ էլեկտրոնային սարքերը, քանի որ էլեկտրոնային հարթակներով պատվերներ ձևակերպող կազմակերպությունների գործունեությունը նույնպես տաքսամտորային գործունեություն է:

5.Պարտադիր պայման է սահմանվել, որ 30 և ավելի տրանսպորտային միջոցներ ունեցող կազմակերպությունները ունենան հաշմանդամների համար նախատեսված մեկ հատ տրանսպորտային միջոց:

6.Լիցենզիայի տուրքը բոլորի համար սահմանվել է 100000 դրամ տարեկան և միաժամանակ յուրաքանչյուր մեքենայի համար սահմանվել է տարեկան 10000 դրամի չափով պետական տուրք, իսկ հաշմանդամների համար նախատեսված մեքենաները ազատվում են պետական տուրքից:

### **3. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը**

Օրենսդրական փաթեթով կվերացվեն տաքսամտորային փոխադրումները կանոնակարգող օրենսդրական դաշտի առկա բացերը, հավասար պայմաններ կսահմանվեն տաքսու ծառայություններ մատուցողների համար, կկանոնակարգվի էլեկտրոնային հարթակներով տաքսու ծառայությունների մատուցման գործընթացը, կբարձրանա ոլորտի վերահսկողությունը, անվտանգությունն ու սպասարկման որակը:

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ**

**1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.** ՀՀ օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ նախատեսվում է փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1471-Ն մեջ:

**2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հեղինակապարասխանությունը.** ՀՀ օրենքների նախագծերի գործողությունը միջազգային պայմանագրերին չի հակասում:

**3. Այլ տեղեկություններ.** Այլ տեղեկություններ չկան:

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի նախագծմանը և քննարկմանը հասարակության մասնակցության մասին**

1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը. Օրենքների նախագծերը տեղադրվել են համացանցում՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության [www.mtcit.am](http://www.mtcit.am) կայքում և <https://brisk-cms.e-draft.am> կայքում:

2. Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին. Նախագծերի մշակման փուլում կազմակերպվել են քննարկումներ հասարակական կազմակերպությունների և տաքսի ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնողների ներկայացուցիչների հետ:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հիցենդավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին**

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը					
Ցուցանիշներ	ընթացիկ (n-րդ) տարի		Հաջորդող 3 տարիները		
	Ըստ n-րդ տարվա պետական բյուջեի	Փոփոխությունը n-րդ տարվա պետական բյուջեի համեմատ	n + 1	n + 2	n + 3
1	2	3	4	5	6
1. Եկամուտներ					
1.1. պետական բյուջեի եկամուտներ					
1.2. ՏԻՄ եկամուտներ					
2. Ծախսեր					
2.1. պետական բյուջեի ծախսեր					
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր					
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական					
3.1. պետական բյուջե					
3.3. ՏԻՄ բյուջե					
4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):	Օրենսդրական փաթեթի ընդունման դեպքում նախատեսվում է պետական բյուջեի մուտքերի ավելացում:				
4.1. Եկամուտների գնահատում					
4.2. Ծախսերի գնահատում					
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)					